

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՈՏԼՆՈՒՄՅԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ  
ԿԱՏԱՐԵՑ  
Ս. ԿԱՐԱՊԵՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՄԷՋ

Ոտնլուայի արարողութիւնը նուիրուած է Քրիստոսի ամենէն յիշատակելի պատգամներէն մէկուն՝ խոնարհութեան, սիրոյ եւ ծառայասիրութեան խորհուրդին:

Այս արարողութեան ընթացքին, մեր եկեղեցիներու հոգեւոր հովիւները, հետեւելով Յիսուսի օրինակին, կը լուան դպիրներուն ոտքերը:

Այս տարի, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան նախագահեց Հոլիվուտի Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ արարողութեան եւ կատարեց ոտնլուան:

Ոտնլուայի արարողութենէն ետք, տեղի ունեցաւ խաւարման գիշերուան կարգը, ի յիշատակ մեր Տիրոջ մատնութեան եւ չարչարանքներուն, որ կը խորհրդանշէ Յուդայի մատնութեան արարքը:

Առաջնորդ Սրբազանը նախագահեց Կլէստէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ արարողութեան:

PRELATE CONDUCTS THE RITE OF WASHING OF THE FEET  
AT ST. GARABED CHURCH

The rite of Washing of the Feet is symbolic of Christ's most memorable message, that of humility, love and service. Following our Lord's example, during this service parish priests wash the feet of acolytes. This year, the Prelate conducted this rite at Hollywood's St. Garabed Church.

Following Washing of the Feet services, the Prelate conducted Vigil services at St. Mary's Church, in remembrance of Christ's betrayal and tortures.